

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Ամերիկայի Եպիսկոպոսական Եկեղեցու գլխաւոր ժողովը (Սինօդ): Վեր. Եթ. (№ 45) հազորդում է, որ Հոկտեմբերի 5—12 ն. տ. տեղի է ունեցել Օհայիո շտատի Սինսինատ քաղաքում Ամերիկայի Եպիսկոպոսական Եկեղեցու գլխաւոր ժողովը, որ գումարում է իւրաքանչիւր երեք տարին մի անգամ: Ժողովի խորհրդաժութեան գլխաւոր կէտերից մէկն էր վճռել, թէ պէտք է այսուհետև էլ գործ ածել «Բողոքական» մակդիրը, որ ցայսօր կիրառութեան մէջ է, որպէս այդ Եկեղեցու յատկորոշ մակդիր:

Եկեղեցու բարեփոխութեան (բեֆորմացիա) կուսակիցները, պնդում են պահել «Բողոքական» մակդիրը, որովհետև այդ մակդիրն է արտայայտիչը այն ամեն լաւ բանի, որ ունի բեֆորմացիան: Հակառակորդները առարկում են, որ Եկեղեցին Ա դարից սկսած որպէս մակդիր ունի կաթոլիկէ բառը, որ իւր նշանակութեան լաւագոյն արտայայտիչն է:

Թէև չէ յաջողել բոլորովին յապաւել «բողոքական» մակդիրը, բայց սակաւ դէսքում կիրառութեան համար համաձայնութիւն կայացել է: Երկու կուսակցութիւնների գլխաւորները յառաջնմէ, մինչև պաշտօնական ժողովների բացումն, համաձայնութեան եկան, կուսակցութիւններից այն՝ որ անհրաժեշտ է համարում «բողոքական» մակդիրը և ընդունում է Եկեղեցու մէջ չորս կէտեր, այն է ս. գիրքը, առաքելական և նիկիական հանգանակները, պաշտօնեաների երեք աստիճանաւորութիւն (սարկաւագ, երեց, եպիսկոպոս և խորհուրդները), համաձայնութեան եկաւ այն կուսակցութեան հետ, որ ցանկանում է Եկեղեցին կաթուղիկէ կոչել և Եկեղեցու մակդիրը որոշելու մի նախագիծ կազմել: Ենթադրում էր չհրաժարուելով «բողոքական» մակդիրի կիրառութիւնից, եղծել միայն գլխաւոր դոկումենտներում, այն է աստուածաշտութեան գլքերում, որոնց մէջ գործ ածել «գիրք ընդհանուր աղօթից վասն կատար-

ման խորհրդոց և արարողութեանց սրբոյ «Կ ա թ ո ւ զ ի կ է» եկեղեցւոյ, որ կոչի եպիսկոպոսական եկեղեցի Հիւսիսային Նահանգացն Ամերիկայի»։ Այս նախագիծը կազմելիս ի նկատի են ունեցել հաւատարիմ մնալով անդիական վերափոխուած եկեղեցուն, նրա հետ միասին անխզելի պահել կապը Քրիստոսի հաստատած պատմական կաթուղիկէ ո. եկեղեցու հետ, որ այդ անունով յայտնի է Ա դարից սկսած, որի մասին խօսւում է թէ առաքելական և թէ նիկիական հանգանակներում Եւ քրիստոնէական հոգւով առաջնօրդուած վերև յիշուած չորս կէ տերին աւելացնել նաև հինգերորդը, այն է Քրիստոսի եկեղեցու անդամ՝ ընդունել այն բոլորին, որոնք Ա. Երրորդութեան անունով կանոնաւորապէս մկրտուած են»։

Այս նախագիծը յանձնուեց ստորին պալատի, այսինքն, հոգեորական և աշխարհական ներկայացուցիչների ժողովին, հոգեորականները 40 քուէով ընդդէմ 15-(10 ձայն էլ բաժանուեց) ձայն տուին յօգուտ աստուածպաշտութեան գրքի վերտառութիւնը առաջարկուած ձեռվ փոխելուն, իսկ աշխարհականներից (որոնց բացարձակ առաւելութիւն էազմելու համար պակաս էր մի ձայն), յօգուտ ձայն տուին 30, հակառակ՝ 24, և 8 ձայն էլ բաժանուեցին, և նախագիծը չանցաւ,

Զայնատուութիւնը կատարւում էր ոչ թէ ըստ անձաց, այլ առանձին՝ ըստ թեմերի։

Զընդունուեց նաև այն առաջարկը, որ ազօթագրքերը օտար լեզուներով թարգմանելիս, յապաւուի «բողոքական» մակդիրը։

1907 թուի գլխաւոր ժողովին՝ 19-րդ կանոնը ուղղուեց այն մաքով, որ եպիսկոպոսը իրաւունք ունենայթոյլ տալ օտարագաւանին հարկաւոր դէպքում եկեղեցում ճառ ասել։ Այս ուղղումն մեծ աղմուկ հանած լինելով իւր ժամանակին, այժմ մերժուեց։

1907 թուի ժողովը ընդունել էր հիւանդների օծումն, այժմ այդ ևս մերժուեց։

Ժողովը յետաձգեց և այն նախագիծը, որով եպիսկո-

պոսները բարւոք էին համարել արգելել բաժանուած ամուսիններին պօակելը,

Գլխաւոր ժողովը զբաղուեց նաև միսիօներական գործով, և որոշեց քարոզչական նոր հինգ թեմ ևս հաստատել, և այսպիսով Ամերիկայի եպիսկոպոսների լիւր համում է մինչև 110։ Ժողովում՝ առաջմանուեց միսիօներու թեան բարձր վարչութիւնը վերակազմել։ Մինչև այժմ՝ քարոզչական յանձնաժողովը ընտրւում էր միայն զլիաւոր ժողովից, այսուհետեւ գլխաւոր ժողովը կընտրի յանձնաժողովի տնդամների միայն կէսը։ Թագեալ կէսը կընտրեն քարոզչական շըրջանները իւրաքանչիւրը մի եպիսկոպոս, մի երէց և մի աշխարհական։ Նախագահը ընտրւում է վեց տարով և նրա իրաւունքը ընդուրձակւում է։

Ժողովը սրաշեց ժամերգութեան ժամանակ թոյլ տալ Ա. Կրքի 1611 թ. արտօնեալ թարգմանութեան հետ նաև 1881—1884 թուերի վերստուգուած թարգմանութիւնները։

Կազմուեց յանձնաժողով քրիստոնէական գաստիարակութեան և այն միջոցների համար, որոնցով կարելի լինի մաքառել անկրօնութեան դէմ։

Ժողովը ընդհանուր հասարակական խնդիրներով էլ զբաղուեց, ինչպէս այդ սովորական է անգլիական և ամերիկական եկեղեցական ժողովներին։

Ժողովը բացի իւր ներքին գործերից հարկաւոր համարեց մի ընդհանուր, համաժողով գումարել այն բոլոր քրիստոնեաներից, որոնք Քրիստոսին Աստուած և Փրկիչ են խոստովանում։ Այս բանի համար 7 եպիսկոպոսներից, 7 երէցներից և 7 աշխարհականներից մի յանձնաժողով կազմեց, որը համաքրիստոնէական ժողով գումարելու խնդիրը պէտք է քննի։ Այդ համաշխարհային քրիստոնէական ժողովին պատակը լինելու է միասին խորհրդակցութիւնը հաւատի և եկեղեցական կազմութեան մասին։ Յանձնաժողովի աշխարհական անդամներից մէկը—Պիրազոնտ Մորգան այդ գործի համար նուիրելէ 20,000 ֆ. ս. (մօտ 180,000 ռ.)։

Այս ձեռնարկութեան յաջողութիւնը լրագրերը կասկածելի են համարում, ինկատի ունենալով, որ ինքն եպիս-

կոպոսական եկեղեցին՝ եթէ դժուարանում է իւր մէջ միութիւն հաստատել, հազիւ թէ կարսղ լինի բոլոր քրիստոնէական եկեղեցիները միացնել.

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

ՈՒԱԽԱՏԱՆՈՒՄ

Ի նկատի ունելով, որ ուսանելու հասակի հրէաները մեծ բազմութեամբ քրիստոնեայ են մկրտւում բողոքական եկեղեցում, ներքին գործոց նախարարութեան հոգեոր դեպարտամենտի ցուցմամբ բողոքական դլսաւոր կոնսիստորիան առաջադրել է պաստօրներին՝ խիստ հսկողութիւն ունենալ քրիստոնէութիւն ընդունել ցանկացող հրէաների վերաբերութեամբ. պաստօրները պարտաւոր են իւրաքանչիւր դէպքում համոզուած լինել, որ բողոքականութիւն ընդունել ցանկացողը կրօնական համոզումով է առաջնորդուած, և ամեն մի հրէայ, որ կամենում է բողոքականութիւն ընդունել, պէտք է երեք ամսից ոչ պակաս նախապատրաստուի և ենթարկուի խիստ քննութեան.